ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ՁԻԱՀ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1

Այս տարի ևս ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մի շարք միջոցառումներ էր նախաձեռնել, որոնց մասին է պատմում «Ժամանակին համաքայլ»-ի հատուկ թողարկումը:

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
+37460 378989 +374 60 478989
newgenerationngngo@gmail.com http://ngngo.net/

«ՊԱՐԶԵՆՔ ՁԵՌՔԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ» ԱԿՑԻԱ

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան ընդառաջ, Հյուսիսային պողոտայում մեկնարկել էր «Պարզենք ձեռքերը՝ հանուն ՄԻԱՎ-ի կանխարգելման» ակցիան, որը նախաձեռնել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն:

Բազմաթիվ քաղաքացիներ միացել են ՄԻԱՎ-ի կանխարգելման ուղղությամբ տարվող պայքարին: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախաձեռնությամբ 3 օր Երևանի կենտրոնում քաղաքացիները հնարավորություն ունեցան լուսանկարվելու՝ պարզելով ձեռքերը հանուն ՄԻԱՎ-ի կանխարգելման:

Ակցիայի հիմնական նպատակն էր հասարակությանը միավորել ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ:

Գրեթե 100 քաղաքացիներ միացել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող ֆլեշ-մոբին, իրենց Ֆեյսբուքյան էջերում տեղադրելով այն լուսանկարները, որոնք արվել է ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ: Մարդիկ իրենց ձեռքի ափին գրել են, թե ինչպես են պատրաստվում պայքարել:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ՊԱՅՔԱՐ

Լոֆթ բազմաֆունկցիոնալ հարթակը դեկտեմբերի 1-ին վերածվել էր ՄԻԱՎ-ի դեմ պայքարի գիտաժողովի: Կենտրոնը իր հարկի տակ էր հավաքել այն մարդկանց, ովքեր զբաղվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմամբ: ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրը՝ դեկտեմբերի 1-ին, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կներկայացրեց իր կողմից պատրաստած «ՄԻԱՎորված պայքար» փաստագրական ֆիլմը, որը պատմում է Հայաստանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դեմ տարվող միասնական պայքարի մասին:

Ֆիլմն անդրադառնում է իրականացվող ծրագրերին և ապագայում սպասվող հնարավոր փոփոխություններին և դրանց հետ կապված խնդիրներին: Փաստավավերագրական ֆիլմի գաղափարը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանինն է: Նա և ոլորտում աշխատող մյուս հասարակական կազկաերպությունների ներկայացուցիչները ֆիլմում պատմում են իրականցվող աշխատանքների, առկա խնդիրների և ծրագրերի շարունակականության հետ կապված խնդիրների մասին: Ֆիլմում բացի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, առաջին անգամ խոսել են այն տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ: Նրանք պատմել են իրենց մատուցվող ծառայությունների կարևորության ու անհրաժեշտության մասին:

Ֆիլմի հեղինակ Արման Ղարիբյանի խոսքով՝ «ՄԻԱՎորված պայքար»-ը լավ հնարավորություն է հասարակության համար, որպեսզի մարդիկ ծանոթանան իրականացվող ծրագրերին ու ՄԻԱՎ-ի հետազոտության կարևորությանը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի Երևանյան գրասենյակի ղեկավար Արման Սահակյանը բացման խոսքում նշեց, որ տեղեկացվածության մակարդակի բարձրացման, շահերի պաշտպանության, կանխարգելման, բուժման և խնամքի համատեքստում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, համագործակցելով Հայաստանում պետական և հասարակական կազմակերպությունների ու անհատների հետ, ինչպես նաև մշտապես աջակցություն ստանալով միջազգային կառույցներից, ունի ոլորտում իր ուրույն ներդրումը:

«Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ կազմակերպությունը նախաձեռնել է «ՄԻԱՎորված պայքար» ֆիլմի նկարահանումը: Հուսով ենք՝ այն դուր կգա Ձեզ և կդառնա ՄԻԱՎ-ի կանխարգելման և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում Ձեր ծավալած գործունեության ջատագովության մի մասնիկը», - նշեց Արման Սահակյանը:

#WADNGNGO
2016

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Մեր առաքելությունն է՝ կազմակերպել
և իրականացնել այնպիսի ծրագրեր
#HIVprevention
#ՀԻՎԿանխարգելում
#HIVTESTING
#ՀԻՎԹեստավորում

ZERODISCRIMINATION
#ԶՐՈԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Երևանում և շատ շրջաններում տարբեր միջոցառումներ են կազմակերպվում ՄԻԱՎ-ի և դրա կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու նպատակով: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, որպես Հայաստանում միակ տռանսգենդեր անձանց կազմակերպություն, կազմակերպել էր մեկօրյա սեմինար-վարժանք «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» թեմայով:

Դասընթացի նպատակն է շահառուների

տեղեկատվության մակարդակի բարձրացման միջոցով հասարակության լայն շերտերին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կարևորության մասին տեղեկացումն ու ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու քաջալերումն է, ինչպես նաև հետազոտության հետ կապված հասարակության մեջ առկա կարծրատիպերի փոփոխումը:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյան մեզ հետ զրույցում նշեց, որ յուրաքանչյուր մարդ պետք

է մտածի ու հոգ տանի իր առողջության մասին, պետք է պահպանի անվտանգության բոլոր կանոնները:

«ՄԻԱՎ-ն ունի պատուհանի շրջան. սա այն շրջանն է, երբ օրգանիզմում արտադրված հակամարմինների քանակը բավարար չէ լաբորատոր հետազոտությամբ հայտնաբերելու համար և տևում է երեքից վեց ամիս: Սա վտանգավոր է, քանի այս ժամանակահատվածում հիվանդությունը կարող է տարածվել: Հետևապես կարևոր է ճիշտ գնահատել սեփական վարքագիծը ու ռիսկային վարքագիծ ունենալուց միջինում երեք ամիս հետո հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ», -նշեց «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

Հիշեցնենք, որ սեմինար–վարժանքն իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շուրջ 10 տարի աշխատում են ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում: Երիտասարդ թիմը այս տարիների ընթացում, տարբեր միջազգային ու տեղական հարթակներում ներկայացրել է ՄԻԱՎ-ի դեմ պայքարի կարևորությունը և ներկայացրել են այն միջոցառումներ, որոնք իրականացվել են կազմակերպության կողմից: Այսօր ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցները առաջին անգամ կներկայացնեն իրենց պայքարի հիմնական ձևերը:

ՄԻԱՎ-ի կանխարգելման և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում իմ գործունեությունը սկսել եմ դեռևս 10 տարի առաջ: Այս ողջ տարիների ընթացքում պայքարել եմ և պայքարելու եմ տեղեկատվության տարածման, կրթական գիտելիքների բարձրացման և մարդու իրավունքների ու շահերի պաշտպանության միջոցով:

Արման Սահակյան

ՄԻԱՎ-ի դեմ պայքարն ինձ համար դարձել է նույնքան կարևոր , որքան գրաճանաչությունը: Այդ իսկ պատճառով սկսեցի պայքարել 20-րդ դարի չարիքներից մեկի դեմ: Իմ գործունեության ընթացքում արդեն կրթել ենք ավելի քան 1000 հոգու, որոնք տեղյակ են ու գիտեն ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների, կենսական հեղ ուկների, պահպանակների ճիշտօգտագ ործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնել ու կարևորության մասին: ՄԻԱՎ-ի տարածվածությունը կանխելու և տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու համար մենք պետք է կատարենք ամենօրյա աշխատանք դեռ դպրոցներից:

Արտյառամ Մովսեսյան

ՄԻԱՎ_ի դեմ պայքարում իմ առաջին քայլերն եմ անում: Անդամակցելով «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ին հետայսու իմ գործունեության ուղղություններից մեկը կլինի պայքարել և հանրությանը իրազեկել ՄԻԱՎ վարակից խուսափելու ուղղությունների և միջոցների մասին:Նաև տեղեկացնել, որ ՄԻԱՎ_ը դատավճիռ չէ, և ՄԻԱՎ_ով վարակված անձինք ունեն հավասար իրավունքներ ողջ հասարակության շրջանում:

Հայարփի Նորեյան

ՄԻԱՎորված պայքար, հենց այս բառերի ուղիղ իմաստով, մենք պետք է պայքարեն հանուն առողջության, հանուն այն նպատակների, որոնց ցանկանում ենք հասնել: Յուրաքանչյուրի առողջությունը պետք է մտահոգի մեզ, այդ իսկ պատճառով պետք է պայքարենք ՄԻԱՎ-ի դեմ: Իմ պայքարելու միջոցը տեղեկատվության տարածումն ու հավատարմությունն է:

Գրիգոր Գևորգյան



ՄԻԱՎ-ի դեմ պայքարում արժևորում եմ տեղեկացվածությունը, ինչպես կանխարգելելու, այնպես էլ ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող մարդկանց հասարակությունից չմեկուսացնելու համար:
Տեղեկացվածությունն ու հետևողականությունը թույլ կտան ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող մարդկանց խուսափել ՁԻԱՀ-ի փուլ անցնելուց և շոշափելի արդյունքներ կտան ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարում:

Գագիկ Մեհրաբյան

ՄԻԱՎ-ից պաշտպանված լինելու առաջին պայմանը իրազեկված լինելն է: Իմ 5 տարվա աշխատանքային փորձն այս ոլորտում փաստում է, որ ով իրազեկված է, նա պաշտպանված է:

Լևոն Չիլինգարյան